ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԱՄՀ)

ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի Կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոն (ԿԿԱՄԿԶՏԿ)

Բացման արարողություն և ԿԿԱՄ տարածաշրջանի կլոր սեղան

Ալմաթի, Ղազախստան, 9-ը հունիսի, 2023 թ.

Մարտին Գալստյան, բացման խոսք

Տիկնայք և պարոնայք, հարգելի գործընկերներ

Ողջունում եմ բոլորիդ ԿԿԱՄԿԶՏԿ ղեկավար կոմիտեի անունից՝ որպես ներկա նախագահող: ԿԿԱՄԿԶՏԿ-ն, իբրև արդյունավետ հարթակ, արագորեն թափ է հավաքում բովանդակային երկխոսության մեջ ներգրավելու, առկա մարտահրավերներին լուծումներ փնտրելու և համատեղ ուսումնառության հնարավորությունները բացահայտելու առումներով: Այսօրվա քննարկման թեմաներն առաջնակարգ կարևորություն ունեն տարածաշրջանի երկրների համար: Մենք հավաքվել ենք այստեղ՝ ուսումնասիրելու աշխարհում գնաճի շեշտակի աճից բխող ներկայիս խնդիրները և դրա հնարավոր ազդեցությունները դրամավարկային քաղաքականության վրա, որի հետ կապված, մենք, անշուշտ, կարող ենք նոր բան առաջարկել աշխարհին: Կանդրադառնանք նաև հարկաբյուջետային մեխանիզմների բարելավման առանցքային խնդրին՝ հասցեագրելու համար երկարաժամկետ կառուցվածքային մարտահրավերները: Կարծում եմ՝ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությանն առնչվող արդիական հարցերի քննարկումները նույնպես, անկասկած, կբացահայտեն հետագա համագործակցության և կարողությունների զարգացման օրակարգի բոլոր հնարավորությունները ԿԿԱՄ տարածաշրջանում:

Վերջին ժամանակներս մենք ականատես ենք լինում աշխարհում գնաճային ճնշումների կտրուկ աճի, որն իր ազդեցությունն է ունենում ողջ աշխարհի տնտեսությունների վրա՝ վտանգելով կայունությունը, աճը և բարեկեցությունը: Միևնույն ժամանակ, ապագա մակրոտնտեսական միջավայրի վերաբերմամբ ավելացող անորոշությունն է՛լ ավելի է բարդացնում քաղաքականության մշակումը՝ մեծացնելով սխալվելու ռիսկերը և դրանցից բխող համապատասխան քաղաքականության հետևանքները: Հետևաբար՝ մենք կանգնած ենք այս մարտահրավերը հասցեագրելու և մեր տնտեսությունները պաշտպանելու արդյունավետ ռազմավարություններ մշակելու խնդրի առաջ: Գործող քաղաքականության և մեխանիզմների, գործիքների, ռազմավարությունների և ինստիտուցիոնալ կարգավորումների մանրակրկիտ գնահատումն ու վերանայումը օգտակար կլինեն կարճաժամկետ արդյունավետության հասնելու և երկարաժամկետ կայունություն ապահովելու առումներով: Այսօր՝ ավելի ուշ, այս հարցերի շուրջ կունենանք համապարփակ քննարկում: Վստահ եմ՝ սա նաև այն ոլորտն է, որտեղ մենք ունենք տարածաշրջանային գործակցության, համաստեղծման մեծ ներուժ և, ուրեմն, կարող ենք նորարարական լուծումներ առաջարկել զարգացող աշխարհին:

Այս գործում վիթխարի նշանակություն է ստանում ինչպես ԱՄՀ և տարածաշրջանային երկրների գործակցությունը, այնպես էլ ԿԿԱՄԿԶՏԿ-ի՝ որպես կարողությունների զարգացմանը և գործընկերների համատեղ ուսումնառության նախաձեռնությունների խթանմանը միտված արդյունավետ հաստատության հիմնումը: Այս հաստատությունների միջև գործընկերությունը հարթակ է ստեղծում կարողությունների զարգացման ու գիտելիքի փոխանակման համար, ինչը քաղաքականություն մշակողներին և իրենց մասնագիտությամբ զբաղվողներին անհրաժեշտ գործիքներով ապահովելու հարցում վճռորոշ դեր կարող է խաղալ՝ մեր առջև ծառացած մարտահրավերները լուծելու նպատակով: Համատեղ ուսումնառությունը խթանելուց և պետական ինստիտուտներին տեխնիկական աջակցության բազմաթիվ հնարավորություններ տրամադրելուց զատ՝ մենք նախատեսում ենք ԿԿԱՄԿԶՏԿ-ին վերապահել նաև համաստեղծման և համատեղ հետազոտական հարթակի դերը: Մեր երկրներում կա հետազոտությունների հսկայական տարածք, որը կարող է ոչ միայն հետաքրքիր լինել տարածաշրջանի հետազոտողներին, այլև հնարավորություն կտա ներգրավելու աշխարհի նշանավոր փորձագետների՝ արդյունավետ համագործակցության և հետազոտություններ իրականացնելու համար: ԱՄՀ դերն այդ առումով կարող է էական լինել: Մենք արդեն այսօր ճանաչում և արժևորում ենք ԿԿԱՄԿԶՏԿ ու ԱՄՀ ներդրումները և անհամբեր սպասում մեր գործընկերության հետագա ամրապնդմանը՝ հանուն ԿԿԱՄ տարածաշրջանում տնտեսական ամրակայության և կայունության մեծացման:

Հուսով եմ, որ այսօրվա կլոր սեղանը ևս մեկ հիանալի հնարավորություն է՝ խորամուխ լինելու այս կարևոր հարցերի ուսումնասիրության մեջ և ի մի բերելու քաղաքականություն մշակողների, տնտեսագետների և ոլորտի փորձագետների այլևայլ տեսակետները: Մենք կուսումնասիրենք նորարարական ռազմավարություններ, կփոխանակենք լավագույն փորձը և կօգտագործենք միմյանց փորձառությունը: Համոզված եմ, որ այս հավաքը կառուցողական երկխոսության, համագործակցության և գործնական գաղափարների ստեղծման խթան ՝ մեր առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու համար:

Իբրև եզրափակում՝ եկեք այս համագործակցությունը դիտարկենք բաց մտքով, պատրաստ՝ ներգրավվելու գաղափարների արդյունավետ փոխանակմանը: Ներկայիս մակրոտնտեսական մարտահրավերները պահանջում են մեր ուշադրությունն ու վճռական գործողությունների դիմելու կոչերը: Կենտրոնանալով մեր դրամավարկային քաղաքականությունների բարելավման գործում գործընկերության ամրապնդման և երկարաժամկետ կառուցվածքային խնդիրների լուծման վրա՝ մենք կարող ենք առաջ ընթանալ այս անհանգիստ ժամանակներում և կառուցել ավելի դիմակայուն և բարգավաճ ապագա ԿԿԱՄ առանձին երկրների և ամբողջ տարածաշրջանի համար:

Շնորհակալություն: Բոլորին մաղթում եմ արդյունավետ քննարկումներ: